ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«17» հուլիսի 2014թ. N 44

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534 -Ն որոշման 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում թվով 17՝ Ալաշկերտ, Այգեվան, Բամբակաշատ, Գետաշեն, Հայկավան, Ջրաշեն, Լենուղի, Նոր Արտագերս, Փշատավան, Շենավան, Խանջյան, Այգեկ, Ակնալիճ, Աղավնատուն, Փարաքար, Բագարան, Քարակերտ գյուղական համայնքներում զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությունների վերականգնման ծրագրի կազմակերպման և իրականացման աշխատանքներին աջակցելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Լ. Մուրադյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների արդյունքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին (Լ. Մուրադյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության աջակցության Արմավիրի մարզային կենտրոնի աշխատակիցներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Արմավիրի մարզի զբաղվածության տարածքային կենտրոնների աշխատակիցներին (համաձայնությամբ):
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Լ. Մուրադյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2014թվականի հունիսի 27-ի
N 249 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Մուրադյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ

Անդամներ՝

Ծ. Գրիգորյան	- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Հ.Հարությունյան	- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ֆինանսական բաժնի պետ
Վ.Աբրահամյան	- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ
Մ. Սարիբեկյան	- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***